ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՌՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-88

Արմինե ՏԻԳՐԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

2013-2015 թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ «Մշակութաբանություն» մասնագիտության մագիստրատուրան, իսկ 2016-2020 թթ.՝ ասպիրանտուրան: 2020 թ. վերապատրաստվել է Իտալիայի Ալմա Մատեր համալսարանում և ՀՀ ROCHEMP կենտրոնում՝ որպես մշակութային ժառանգության միջազգային փորձագետ:

ԱՄՆ Կոնգրեսի միջազգային առաջնորդության «Open world»՝ մշակութային ժառանգության պահպանության ծրագրի 2024 թ. շրջանավարտ է (Վաշինգտոն, Սանտա ֆե):

2024 թվականից «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կրտսեր հետազոտող է:

Ներկայում մասնակցում է միջազգային վերապատրաստման ծրագրի՝ աշխարհի 14 փորձագետների շարքում: ԱՄՆ-ի Մասսաչուսեթսի «The National Association for Armenian Studies and Research» հայագիտական հետազոտական ծրագրի 2022 և 2023 թթ. և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հայագիտական հետազոտական ծրագրերի 2023 թ. հաղթողն է: 2025 թ. հունիսից՝ պատմական գիտությունների թեկնածու

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների և գրքերի:

https://orcid.org/0000-0001-5886-3667

Հիմնաբառեր. *Միջազգային քրեական դատարան (Հռոմի սատատուտ), Հայաստանի Հանրապետություն, Արցախի մշակութային ժառանգություն, արցախահայերի մշակույթի իրավունք, բռնի տեղահանություն, Ադրբեջան*

2025 թվականի փետրվարի 1-ին լրացել է մեկ տարին, ինչ Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (Հռոմի սատատուտը): Կանոնադրության ընդունումը, մարդկության դեմ ծանր հանցագործությունների դեմ պատժամիջոցներ կիրառելու կառուցակարգերից բացի, նաև միջազգային իրավունքի ոլորտում ունի կարևոր նշանակություն՝ բացելով նոր հնարավորություններ ինչպես Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության, այնպես էլ բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների (ներառյալ մշակույթի իրավունքը) իրացման և հարգման համար: Սակայն, ինչպես փաստարկված է սույն հոդվածում, Ադրբեջանի կողմից 2024 թվականի ընթացքում (ինչպես նաև դրանից առաջ և հետո) Արցախի մշակութային ժառանգության շարունակական ոչնչացումները, յուրացման ու պղծման, պատմական ճշմարտության խեղաթյուրման գործընթացները, ինչպես նաև արցախահայերի մշակութային ժառանգության հետ հաղորդակցվելու իրավունքի շարունակական ոտնահարումները վկայում են այն մասին, որ Ադրբեջանը չի հարգել և չի հարգում միջազգային իրավունքի նորմերը:

Այս հոդվածում Միջազգային քրեական դատարանի կանոնադրության շրջանակներում ներկայացվում են մշակութային ժառանգության ոչնչացման արգելքները, բռնի տեղահանության հետ կապված բազմավեկտոր խնդիրները, որոնցից է նաև մշակույթի իրավունքի խախտումը: Վերլուծվում է մշակութային ժառանգության պահպանության կարևորությունը՝ որպես արցախահայերի մշակույթի իրավունքի իրացման հիմնական պայման, ինչպես նաև բացահայտվում են այն հեռանկարները, որոնք, ըստ Հռոմի սատատուտի դրույթների, կարող են նպաստել Արցախի հայկական մշակութային ժառանգության հետագա պաշտպանությանը:

Ներածություն

Մշակութային ժառանգության պահպանությունը համամարդկային մտահոգությունների տիրույթում գտնվող խնդիր է: ՄԱԿ-ը 1945 թվականից ի վեր, որպես միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը երաշխավորող միջկառավարական կազմակերպություն[1], մշակութային արժեքների ոչնչացումը պատերազմների ժամանակ որակել է իբրև համընդհանուր մշակութային կապերով միավորված աշխարհի ժողովուրդների միասնականությունը խաթարող ամենալուրջ սպառնալիքներից մեկը՝ բնութագրելով դա որպես մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություն: Մշակութային արժեքները պատերազմական վտանգներից պաշտպանելու ցանկությամբ ՄԱԿ-ն ընդունել է մի շարք հռչակագրեր և կանոնակարգեր: Դրանցից մեկը Հռոմի կանոնադրությունն է, որը, ի թիվս այլ դրույթների, ունի նաև մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ կետեր: Կանոնադրությունն ընդունվել է 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում՝ ՄԱԿ-ի լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական համաժողովի կողմից, և ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ին[2]:

Հայաստանի Հանրապետությունում Միջազգային քրեական դատարանի կանոնադրությունը (Հռոմի ստատուտը) ուժի մեջ է արդեն մեկ տարի. դա պաշտոնապես ընդունվել է 2024 թվականի փետրվարի 1-ին, իսկ այս առիթով Միջազգային քրեական դատարանում պաշտոնական միջոցառումը կայացել է փետրվարի 8-ին[3]: Մինչ այդ՝ 2023 թվականի հոկտեմբերի 3-ին, ՀՀ Ազգային ժողովը 60 կողմ, 22 դեմ ձայնով ընդունել էր Հռոմի ստատուտի վավերացման մասին օրենքի նախագիծը[4]՝ դրանով իսկ ցույց տալով, որ գերակա է համարում կանոնադրության հիմնական ուղերձները: Նշենք, որ Հայաստանը դեռևս 1999 թվականին էր ստորագրել Հռոմի ստատուտը[5]:

Հռոմի կանոնադրության համաձայն՝ մարդկության դեմ ծանր հանցագործություններ են ցեղասպանությունը[6], բնակչության բռնի տեղահանումը[7], մշակութային ժառանգության դեմ ուղղված կամ դրա վրա ազդող հանցագործությունները[8]՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք տեղի են ունենում զինված հակամարտության թե խաղաղության պայմաններում[9]: Բացի դրանից, կանոնադրությունը պատերազմական հանցագործություն է համարում միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները՝ ներառելով նաև հարձակումները մշակութային ժառանգության վրա:

Կանոնադրության ընդունմամբ, ի թիվս այլ երաշխիքների, ՀՀ-ն հետապնդում էր երկու հիմնական նպատակ.

- կանխել հետագա բռնությունները և ապահովել անվտանգային լրացուցիչ կառուցակարգեր մարդկության դեմ ծանր հանցագործությունները հետագայում բացառելու համար,
- ճանաչել դատարանի իրավազորությունը հետադարձ ուժով, ինչը հնարավորություն է տալիս դատարանին հայց ներկայացնելու դեպքում քննելու ոչ միայն 2020-2024 թվականներին արցախահայության բռնի տեղահանության, մշակութային իրավունքների խախտումների, հուշարձանների նկատմամբ հաղորդակցության արգելքների, վերադարձի իրավունքի խախտումների և այլ հիմնահարցեր, այլև ավելի վաղ հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանական հանցագործությունները:

Ադրբեջանի կողմից իրականացվող բռնությունների կանխումը և անվտանգության ապահովման կառուցակարգերի

---

[1] United Nations, About us, https://www.un.org/en/about-us (մուտք՝ 02.02.2025).

[2] UN Diplomatic Conference of Plenipotentiaries on the Establishment of an International Criminal Court, Rome, 1998: Official Records, Vol. I, (United Nations, New York, 2002), https://legal.un.org/icc/rome/proceedings/E/Rome%20Proceedings_v1_e.pdf (մուտք՝ 02.02.2025):

[3] ՀՀ ԱԳՆ մամուլի խոսնակ: Միջազգային քրեական դատարանում տեղի կունենա Հայաստանի անդամակցությանը նվիրված պաշտոնական միջոցառումը, https://www.facebook.com/ArmSpoxMFA/posts/pfbid0pVh1tb9KPs4WAh1JTKQguUE-26PCRXvsnBM5xdvsTRv6DVyux12ZjEsGLy3qCHr13l (մուտք՝ 02.02.2025):

[4] Ազատություն ռադիոկայան: Ազգային ժողովն ընդունեց Հռոմի ստատուտի վավերացման մասին օրենքի նախագիծը, https://www.azatutyun.am/a/32620778.html (մուտք՝ 02.02.2025):

[5] ՀՀ Ազգային ժողով: Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը մասնակից պետությունների վերաբերյալ ցանկ, http://www.parliament.am/draft_docs8/K-658_AGN_Cank.pdf (մուտք՝ 02.02.2025):

[6] International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court. United Nations, Article 6.

[7] International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court. United Nations, Article 7(1)(b).

[8] International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court, Article 8(2)(b)(ix), Article 8(2)(e)(iv).

[9] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 98, https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/20210614-otp-policy-cultural-heritage-eng.pdf (մուտք՝ 02.02.2025).

ստեղծումը կարող էին վերաբերել նաև Արցախի մշակութային ժառանգության և արցախահայերի իրավունքների պաշտպանության հարցերին, սակայն 2024 թվականի ընթացքում արձանագրվել է հակառակ գործընթաց: Արցախի հայկական մշակութային ժառանգությունը Ադրբեջանի կողմից համակարգված և ինտենսիվ կերպով ոչնչացվել, յուրացվել և պղծվել է: Իսկ արցախահայերի իրավունքների երաշխավորման տեսանկյունից, ոչ միայն չի ապահովվել նրանց՝ մշակութային կյանքին մասնակցելու և սեփական ինքնությանը համապատասխան ապրելու իրավունքը, այլև մշակութային կառույցների, ինչպես նաև բնակելի տների, ամբողջական գյուղերի և քաղաքների ոչնչացման միջոցով արցախահայերը զրկվել են նույնիսկ ապագայում իրենց մշակութային կյանքին մասնակցելու հնարավորությունից:

Մշակութային ժառանգության պաշտպանությունը Հռոմի կանոնադրության շրջանակում

Հռոմի կանոնադրությունը դատապարտում է մշակութային ժառանգության դեմ կամ դրա վրա ազդող հանցագործությունները՝ թե՛ զինված հակամարտության թե՛ խաղաղության ժամանակ[10]: Բացի այդ, հարկ է նշել, որ, ընդլայնելով ժառանգության ընկալման և պաշտպանության միջոցները, դատարանը ժառանգությանը հասցված վնասը գնահատում է տուժած համայնքների սովորույթների, մշակույթի և կրոնի նկատմամբ հարգանքի տեսանկյունից[11]: Կարևոր է ընդգծել, որ մշակութային ժառանգությանը վերաբերող Հռոմի կանոնադրության երկու դրույթները՝ 8(2)(b)(ix) և 8(2)(e)(iv), անմիջականորեն կիրառելի են ռազմական նպատակներ չհանդիսացող մշակութային ժառանգության վրա հարձակումների դեպքում և պատերազմական հանցագործություն են համարվում՝ առնչվելով թե՛ միջազգային, թե՛ ոչ միջազգային զինված հակամարտություններին: Հիշյալ հոդվածներում ժառանգությունը սահմանվում է որպես քաղաքացիական օբյեկտների հատուկ ենթախումբ՝ արտացոլելով մշակութային արժեքներին տրամադրվող լրացուցիչ պաշտպանությունն այլ քաղաքացիական օբյեկտների հետ համեմատած՝ ժառանգության ունեցած հատուկ նշանակության պատճառով: Քաղաքացիական կառույցները, ի թիվս այլոց, կրոնին, կրթությանը, արվեստին, գիտությանը կամ բարեգործական նպատակներին նվիրված շենքերն ու պատմական հուշարձաններն են[12], որոնք պատկանում են «մշակութային արժեքների» սահմանմանը[13]: Ըստ այդմ՝ մշակութային ժառանգություն են համարվում կրոնական կամ աշխարհիկ հուշարձանները, այդ թվում՝ ճարտարապետական, մոնումենտալ քանդակագործության և գեղանկարչության գործերը, հնագիտական տարրերը կամ կառույցները, արձանագրությունները, քարանձավային կացարանները, ինչպես նաև մշակութային արժեք ներկայացնող շենքերը, շենքերի խմբերը, թանգարանները, արխիվներն ու գրադարանները: Բացի այդ, մշակութային ժառանգության բաղկացուցիչ են շարժական առարկաները (արվեստի գործեր, քանդակներ, հավաքածուներ, ձեռագրեր, գրքեր, գրառումներ), հնագիտական վայրերը, ոչ նյութական մշակութային (պրակտիկաներ, մշակութային տարածքներ) և բնական (մշակութային արժեք ունեցող բնական վայրեր, ներառյալ մշակովի լանդշաֆտները, ֆիզիկական, կենսաբանական կամ երկրաբանական կազմավորումները) ժառանգությունը[14]:

Հռոմի կանոնադրությունը մշակութային ժառանգությունը ճանաչում է լայն հայեցակարգով՝ ընդգծելով, որ դա ներառում է ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական տարրերի և ժառանգության ողջ համատեքստի ամբողջությունը[15]: Հատկանշական է նաև, որ Հռոմի կանոնադրության տիրույթում ժառանգությունը դիտարկվում է որպես համայնքի ինքնության և պատկանելության զգացում ձևավորող

[10] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 98, p. 37.
[11] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 99, p. 37.
[12] Հիմնվելով Համաշխարհային ժառանգության 1972 թվականի կոնվենցիայի մոտեցման վրա՝ 1-ին հոդվածում «հուշարձանները» կարող են լայնորեն սահմանվել որպես «ճարտարապետական աշխատանքներ, մոնումենտալ քանդակագործության և նկարչության գործեր, հնագիտական բնույթի տարրեր կամ կառույցներ, արձանագրություններ, քարանձավային բնակավայրեր և առանձնահատկությունների համակցություններ»: Այնուամենայնիվ, համապատասխանելով կանոնադրության 8(2)(b)(ix) և 8(2)(e)(iv) հոդվածներով պաշտպանված այլ օբյեկտներին, հուշարձանի համար անհրաժեշտ չէ, որ դա լինի «համաշխարհային բացառիկ կարևորության արժեք»: Այսինքն՝ Հռոմի կանոնադրության տիրույթում մշակութային արժեքները պաշտպանվում են՝ անկախ իրենց մեծ նշանակությունից:
[13] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 14, p. 7.
[14] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 16.
[15] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 3.

հիմնական գործոն[16]: Կանոնադրությունն արգելում է հակառակորդի ունեցվածքը ոչնչացնելը կամ գրավելը[17], քաղաքի կամ տարածքների կողոպուտը[18], եթե այդպիսի ոչնչացումը կամ բռնագրավումը հրամայական կերպով չի պահանջվում՝ ելնելով պատերազմի ռազմական անհրաժեշտությունից:

Հռոմի կանոնադրությունը մշակութային ժառանգությունը համարում է մարդու մշակութային ինքնության համար կարևոր արժեք[19]՝ դա կապելով մշակույթի իրավունքի հետ:

Մշակութային ժառանգության և մարդու իրավունքների անքակտելի կապը հաստատվեց նաև 2009 թվականին՝ ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների» կոմիտեի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքի վերաբերյալ թիվ 21 ընդհանուր մեկնաբանությունում. «Անհնար է տարանջատել ժողովրդի մշակութային ժառանգությունը հենց ժողովրդից և նրա իրավունքներից»[20]:

Հռոմի ստատուտի ընդունման պայմաններում 2024-2025 թվականների ընթացքում Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման, պղծման և յուրացման դեպքերը

2024 թվականին, չնայած Հռոմի ստատուտի ընդունմանը, Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային ժառանգության նկատմամբ հանցագործություններն առավել ինտենսիվ բնույթ ստացան: Ադրբեջանը նոր մեթոդներով շարունակեց հայկական պատմական հետքի վերացման գործընթացը՝ անտեսելով միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները:

Հիմնահատակ ոչնչացվել են մի շարք եկեղեցիներ, պատմական գերեզմանոցներ, Հայոց ցեղասպանությանը, Հայրենական պատերազմին և Արցախյան ազատամարտին նվիրված հուշարձաններ, վնասվել ու քանդվել են թանգարաններ, խաչքարեր, հուշահամալիրներ ու մշակութային այլ կառույցներ[21], ինչպես նաև ամբողջական գյուղեր ու քաղաքներ՝ իրենց բնապատմական լանդշաֆտով:

Արցախի հոգևոր արժեքների և պատմական հետքի ոչնչացումը: 2024 թվականի փետրվարին վանդալիզմի են ենթարկվել Ծարի Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր եկեղեցիները՝ շինարարական աշխատանքների քողի տակ քերելով եկեղեցու հարավային պատին առկա խաչային հորինվածքները, ջնջելով արձանագրությունները[22]: Ապրիլին ոչնչացվել և հողին է հավասարեցվել Շուշիի Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ 19-րդ դարի եկեղեցին[23], իսկ ավելի վաղ պայթեցվել էր դրա մի մասը[24]՝ վնասելով գմբեթն ու զանգակատունը:

Հիմնահատակ ավերվել է նաև Արցախի Քաշաթաղի շրջանի Տանձատափի 19-րդ դարի հայկական եկեղեցին[25]: Ադրբեջանը հիմնահատակ ոչնչացրել է Բերձորի Սուրբ Համբարձում եկեղեցին[26]: Հիշեցնենք, որ մինչ ոչնչացումը, Ադրբեջանն առաջ էր մղում վերջինս մզկիթի վերածելու պետական քաղաքականությունը[27]:

Հայկական պատմական հետքը ջնջելու քաղաքականության իրագործմամբ

---

[10] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 15.
[17] International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court, Article 8(2)(b)(xiii)
[18] International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court, Article 8(2)(b)(xvi).
[19] International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, § 16.
[20] United Nations, A/71/317, Seventy-first session, Item 69 (b) of the provisional agenda, Promotion and protection of human rights: human rights questions, including alternative approaches for improving the effective enjoyment of human rights and fundamental freedoms, 2016, § 53.
[21] Տիգրանյան Ա., 2023, Արցախի մշակութային ժառանգությունը, պաշտպանության մեխանիզմները ժառանգության պաշտպանության միջազգային համակարգում, «Վեմ» մատենաշար, թիվ 6:
[22] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Հերթը հասավ Ծարին, https://monumentwatch.org/hy/alerts/հերթը-հասավ-ծարին/ (մուտք՝ 02.02.2025):
[23] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը հողին է հավասարեցրել Շուշիի Սբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հողին-է-հավասարեցրել-շուշի/ (մուտք՝ 02.02.2025):
[24] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին ավերվում է ադրբեջանցիների կողմից, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիի-կանաչ-ժամ-եկեղեցին-ավերվում-է-ա/ (մուտք՝ 02.02.2025):
[25] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը ոչնչացրել է Տանձատափի եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-տանձատափի-եկեղ/ (մուտք՝ 02.02.2025):
[26] News.am, Օկուպացված Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցու ոչնչացումը ցեղասպանական գործողություն է. ահազանգ, https://news.am/arm/news/823298.html (մուտք՝ 02.02.2025):
[27] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին մզկիթի վերածելու ադրբեջանական նախագծի մասին, https://monumentwatch.org/hy/alerts/բերձորի-սուրբ-համբարձում-եկեղեցին-մզ/ (մուտք՝ 02.02.2025):

ոչնչացվել է Շուշիի Ղազանչեցոցի հին գերեզմանոցը[28]: Իսկ Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու նկատմամբ դեռևս 2020 թվականի հոկտեմբերից սկսված ոչնչացման, յուրացման, պղծման և խեղաթյուրման քաղաքականությունը 2024 թվականի ընթացքում շարունակվել է՝ վերափոխելով, խեղաթյուրելով եկեղեցու գմբեթը, իսկ խաչաքանդակներն ու Քրիստոսի պատկերաքանդակները քերվել և վնասվել են[29]:

Դադիվանքի, Գանձասարի և Ամարասի շուրջ շարունակվել է պատմական կեղծարարությունը՝ հայկական պատմական եկեղեցիները համարելով աղվանական, իսկ արձանագրություններն ու խաչաքանդակները՝ կեղծ[30]: Բացի այդ, Շուշիում՝ Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձանի տարածքում, որն ավելի վաղ ոչնչացվել էր[31], կառուցվել է ադրբեջանական «Դրոշի հրապարակը»[34]: Համաձայն ադրբեջանական լրատվականների տարածած տեղեկությունների՝ «Դրոշի հրապարակի» մոտ կառուցվելու է նաև «հաղթանակի թանգարանը»՝ նվիրված 44-օրյա պատերազմում «Ադրբեջանի տարած հաղթանակին»[33]: Նույն վայրում է կառուցվում նաև Շուշիի նոր մզկիթը, որի հիմնարկեքը կատարվել էր դեռևս 2021 թվականի մայիսին՝ Իլհամ Ալիևի կողմից[34]:

2025 թվականին արդեն ադրբեջանցիները պղծել են Ստեփանակերտի հուշահամալիրի շիրմաքարերը, ջարդել շիրմաքարերի մոտ տեղադրված քարե ծաղկամանները, պոկել սալահատակի քարերը[35]:

Ամբողջական քաղաքների ու գյուղերի ոչնչացումը: 2024 թվականի ապրիլին հիմնահատակ ոչնչացվել է Քարինտակի գյուղը՝ իր հին թաղամասերով, աղբյուրներով, քաղաքացիական ենթակառուցվածքներով և բնապատմական միջավայրով[36]: Վանդալիզմի հետևանքով ոչնչացվել է նաև գյուղի կենտրոնում կանգնեցված Երկրորդ համաշխարհային պատերազմի հուշարձան-կոթողը: Գետնի երեսից ջնջվել են համայնքային մի շարք կենտրոններ՝ միջնակարգ դպրոցը, մանկապարտեզը, մշակույթի տունը, բուժկետը, գյուղապետարանը: Իսկ մինչ այդ՝ 2021 թվականին, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարել էր գյուղի պատմադավանական միջավայրի փոփոխման մասին՝ նույն թվականի նոյեմբերի 7-ին գյուղում կատարելով մզկիթի հիմնարկեքը[37]:

Արդեն 2024 թվականի օգոստոսին ամբողջապես ոչնչացվել է Մոխրենես գյուղը՝ ներառյալ գյուղի Սուրբ Սարգիս եկեղեցին[38]: 2025 թվականի փետրվարին պարզ է դարձել, որ հիմնահատակ ավերվել է Արցախի Հադրութի շրջանի Մարիամաձոր գյուղը՝ ներառյալ գյուղի պատմամշակութային ժառանգության մեծ մասը, այդ թվում՝ Սուրբ Մինաս եկեղեցին, Շենին կամուրջը, Վնեսաբերդի ամրոցը[39]: Նույն ամսին վնասվել և պղծվել է Ծիծեռնավանքի

[28] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը ոչնչացրել է Շուշի քաղաքի Ղազանչեցոց (Հին) գերեզմանոցը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-շուշի-քաղաքի-ղա/ (մուտք՝ 02.02.2025):

[29] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ այլափոխված և պղծված, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիի-սուրբ-ամենափրկիչ-եկեղեցին՝-այ/

[30] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Հերթական կեղծիքները Դադիվանքի և Գանձասարի վերաբերյալ, https://monumentwatch.org/hy/alerts/պատմության-կեղծարարությունը-դադիվան/ (մուտք՝ 02.02.2025):

[31] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիում ադրբեջանական թանգարան, մզկիթ և հրապարակ՝ Հայոց ցեղասպանության ավերված հուշարձանի տարածքում, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիում-ադրբեջանական-թանգարան-մզկի/ (մուտք՝ 02.02.2025):

[32] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի ավերումը, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիում-հայոց-ցեղասպանության-զոհեր/ (մուտք՝ 02.02.2025):

[33] Сотрудник Шушинского государственного заповедника Муслим Имранлы, Telegram, 2024, September 21, https://t.me/bez_tor/53964?single&fbclid=IwY2xjawFbyINleHRuA2FIbQIxMAABHS5HBXTvESAr_Tvb1JDrtknxjGmekuRRMrM2RDYBySleYIB-W2NBwIt2yAA_aem_GxfnM4y_QtPUnXkLAFZuxQ (մուտք՝ 02.02.2025):

[34] CBC Azerbaijan, Ильхам Алиев заложил фундамент новой мечети в Шуше, May 13, 2021, https://www.youtube.com/watch?v=sAXPwmmIqmQ, (մուտք՝ 02.02.2025):

[35] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը պղծել է Ստեփանակերտի հուշահամալիրի շիրմաքարերը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-պղծել-է-ստեփանակերտի-հուշա/ (մուտք՝ 02.02.2025):

[36] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը հիմնահատակ ավերել է Քարինտակ գյուղը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հիմնահատակ-ավերել-է-քարինտ/ (մուտք՝ 02.02.2025):

[37] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Նոր մզկիթների հիմնարկեք՝ Արցախի օկուպացված հայկական բնակավայրերում, https://monumentwatch.org/hy/alerts/նոր-մզկիթների-հիմնարկեք՝-արցախի-օկու/ (մուտք՝ 02.02.2025):

[38] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը ոչնչացրել է Մոխրենեսի Սբ Սարգիս եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-մոխրենեսի-սբ-սա/ (մուտք՝ 02.02.2025):

[39] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանցիները հիմնահատակ ավերել են Արցախի Հադրութի շրջանի Մարիամաձոր գյուղը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանցիները-հիմնահատակ-ավերել-են/ (մուտք՝ 02.02.2025):

խորանը (ջարդվել են խորանում գտնվող Սուրբ սեղանը և խաչակալը): Նշենք, որ դեռևս 2023 թվականին պղծվել և վնասվել էր Ծիծեռնավանքի տաճարը[40]:

Արցախի մշակութային ժառանգության ոչնչացումը՝ որպես արցախահայերի մշակույթի իրավունքի խախտում

Միջազգային շատ փաստաթղթերում մշակութային ժառանգության ոչնչացումը համարվում է մարդու իրավունքների խախտում: Այս փաստաթղթերից առանցքային է ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցող Կարիմա Բենունի «Մշակութային ժառանգության դիտավորյալ ոչնչացումը՝ որպես մարդու իրավունքների խախտում»[41] 2016 թվականի զեկույցը, որտեղ ընդգծվում է ժառանգության ոչնչացման ազդեցությունը մարդկանց վրա: ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ խոսնակի մշակութային իրավունքների հայեցակարգային և իրավական դաշտը վերանայող զեկույցում[42] նույնպես անդրադարձ է կատարվում ժառանգության ոչնչացման և մարդու իրավունքների կապին: Բացի այդ, Մարդու իրավունքների խորհուրդն իր «Զինված հակամարտությունների իրավիճակներում մշակութային իրավունքների և ժառանգության պաշտպանության մասին» 6/1 բանաձևում (Human Rights Council 6/1) հաստատել է, որ մշակութային արժեքների ոչնչացումը խաթարում է մշակութային իրավունքների իրացման գործընթացը[43]:

Հռոմի կանոնադրությունում այս հարցի առնչությամբ աներկբա նշվում է, որ մշակութային ժառանգության վրա հարձակումները խախտում են մարդու իրավունքները[44]: Հռոմի գրասենյակը համարում է, որ մշակութային ժառանգության նկատմամբ հարձակումները կարող են խախտել մարդու իրավունքները՝ ոչնչացնելով այն պայմանները, որոնք հնարավորություն են տալիս անձանց՝ անկախ ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբերի հետ նրանց կապից, առանց խտրականության մուտք գործելու, մասնակցելու և նպաստելու մշակութային կյանքին:

Վերջին ժամանակներում՝ ինչպես զինված հակամարտությունների ընթացքում, այնպես էլ խաղաղ պայմաններում, մշակութային օբյեկտները վնասվել, սրբապղծվել, վերաօգտագործվել կամ հափշտակվել են՝ հաճախ նպատակ ունենալով վնաս հասցնելու այն համայնքներին, որոնց հետ դրանք անքակտելիորեն կապված են: Հետևաբար՝ ինչպես նյութական, այնպես էլ ոչ նյութական մշակութային ժառանգության պաշտպանությունն արտացոլվում է մշակութային արժեքների պաշտպանության վերաբերյալ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերում[45], ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային նորմերում և մշակութային ժառանգությանը վերաբերող մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգերում[46]:

Մասնավորապես՝ մշակութային ժառանգությանը հասանելիության և դրանից օգտվելու իրավունքը ներառում է մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը, ազգային փոքրամասնությունների՝ սեփական մշակույթը վայելելու իրավունքը, ինչպես նաև բնիկ ժողովուրդների ինքնորոշման և մշակութային ժառանգության իրավունքը[47]: Մշակութային ժառանգու-

[40] Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանի «աղվանա-ուդիական» համայնքի ներկայացուցիչները պղծել և քանդել են Արցախի Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի հայկական եկեղեցու եզակի շուրֆը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանի-աղվանա-ուդիական-համայնք/ (մուտք՝ 02.02.2025):

[41] United Nations, A/71/317, Promotion and protection of human rights: human rights questions, including alternative approaches for improving the effective enjoyment of human rights and fundamental freedoms, 2016.

[42] UN General Assembly, Report of the Special Rapporteur in the Field of Cultural Rights, Geneva, 2016, A/HRC/31/59, https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/RegularSessions/Session31/Documents/A.HRC.31.59_E.docx (մուտք՝ 26.12.2024):

[43] United Nations, A/71/317, Promotion and protection of human rights: human rights questions, including alternative approaches for improving the effective enjoyment of human rights and fundamental freedoms, 2016. § 15.

[44] International Criminal Court. 2021. § 28, p. 10.

[45] UNESCO, Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land. The Hague, 18 October 1907, arts. 27, 56; https://www.legal-tools.org/doc/fa0161/pdf/ (մուտք՝ 02.02.2025:; UNESCO, Protocol additional to The Geneva Conventions of 12 August 1949, and relating to The Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), art. 53, https://www.legal-tools.org/doc/d9328a/pdf/ (մուտք՝ 02.02.2025); UNESCO, Protocol additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to The Protection of Victims of Non-International Armed Conflicts (Protocol Ii), art. 16 https://www.legal-tools.org/doc/fd14c4/pdf/ (մուտք՝ 02.02.2025); UNESCO, Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1954, arts. 1, 4, https://www.legal-tools.org/doc/6d6697/pdf/ (մուտք՝ 02.02.2025); UNESCO, Second Protocol to the Convention or the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1999, arts. 6, 15 https://www.legal-tools.org/doc/7d8622/pdf/ (մուտք՝ 02.02.2025):

[46] Rome Statute of the International Criminal Court, art. 21(3), https://www.legal-tools.org/doc/7b9af9/pdf/ (մուտք՝ 02.02.2025):

[47] Universal Declaration of Human Rights ("UDHR"), art. 27(1). International Covenant on Economic, Social and Cultural Rights ("ICESCR"), art. 15(1)(a); Report by the Special Rapporteur in the field of cultural rights, UN. Doc. A/71/317 (2016), para. 14.

թյան ոչնչացումը կարող է նաև խախտել փոխկապակցված այլ իրավունքներ, ինչպիսիք են արտահայտման ազատությունը, մտքի, խղճի և կրոնի ազատությունը, կրթության իրավունքը, տնտեսական իրավունքները և զարգացման իրավունքը[48]:

Ժառանգության տեսաբանները նույնպես հաստատում են, որ ժառանգությունը պետք է պաշտպանվի որպես մարդու իրավունքների անքակտելի բաղկացուցիչ[49]: Իսկ հուշարձաններին հասցված վնասը, չսահմանափակվելով նյութական և ոչ նյութական հայեցակետերով և դուրս գալով դրանց շրջանակներից, կարող է ներառել նաև մարդկային միջավայրին հասցված վնասը[50]: Այսպիսի մոտեցմամբ՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման հետևանքները, դուրս գալով ֆիզիկական ոլորտից, խոր արձագանք են գտնում արցախահայության ինքնության տիրույթում:

ՄԱԿ-ի մշակույթի իրավունքի գծով հատուկ զեկուցող Կարիմա Բենունը նշում է. «Ժառանգության վրա հարձակումները նախ և առաջ հարձակումներ են մարդկանց և նրանց իրավունքների վրա»[51]: Իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախկին գլխավոր տնօրեն Իրինա Բոկովան պնդում է, որ «...կարիք չկա ընտրություն կատարելու կյանքեր փրկելու և մշակութային ժառանգությունը պահպանելու միջև. դրանք միմյանցից անբաժան են»[52]: Իրինա Բոկովան նաև հաելում է, որ ժառանգության ոչնչացում նշանակում է «երկրորդ անգամ սպանել ժողովրդին»[53]: Այս իմաստով, Արցախի մշակութային ժառանգության հանդեպ թշնամական պահվածքը պարզապես ժառանգության դեմ ուղղված հարձակում չէ, այլ ինքնության, անհատական և խմբային իրավունքների մերժման դրսևորում:

Արցախահայերի բռնի տեղահանությունը և մշակութային արժեքների ոչնչացումը՝ որպես մարդկության դեմ ծանր հանցագործություն

Տեղահանությունը, Հռոմի կանոնադրության, Հարավսլավիայի և Ռուանդայի միջազգային քրեական տրիբունալների կանոնադրությունների համաձայն, որակվում է որպես մարդկության դեմ ուղղված ծանր հանցագործություն[54] և բնութագրվում իբրև խաղաղ բնակչության դեմ «համատարած» կամ «համակարգված» հարձակման հետևանք[55]:

Բռնի տեղահանությունն ինքնին բազմաշերտ գործընթաց է, որը ներառում է մարդու տարբեր հիմնարար իրավունքների խախտումներ: Դա ոչ միայն պատերազմական հանցագործություն է, հայրենազրկում, սեփականության իրավունքից զրկում, ազատ տեղաշարժի, ընտանեկան կյանքի անձեռնմխելիության, անձնական անվտանգության, արժանապատվության իրավունքի խախտումներ, այլև մշակույթի իրավունքի խախտում, քանի որ վերջինս ոչ միայն անձի, այլև ամբողջական համայնքի ինքնության պահպանման երաշխիքներից է՝ հաստատված նաև «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 27-րդ հոդվածով, ՄԱԿ-ի 1966 թվականի դաշնագրի 15-րդ հոդվածով և միջազգային իրավունքի այլ նորմերով:

Հետևաբար՝ Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման ազդեցությունը դուրս է գալիս արժեքի զուտ ֆիզիկական կորստի շրջանակից՝ վերջինիս տիրույթում ընդգրկելով նաև արցախահայերի հավաքական ինքնությանն ու իրավունքներին հասցված վնասը: Բացի այդ, այս մոտեցումը նշանակում է, որ արցախահայության բռնի տեղահանության հետևանք-

[48] Universal Declaration of Human Rights, UDHR, articles 18, 26-27; International Covenant for Civil and Political Rights ("ICCPR"), arts. 18-19. Convention on the Rights of the Child, arts. 28-29; European Convention on Human Rights, arts. 9-10; American Convention on Human Rights, arts. 12-13, 26; International Covenant on Economic, Social and Cultural Rights, ICESCR, arts. 13, 15; Report of the independent expert in the field of cultural rights, Ms. Farida Shaheed, submitted pursuant to resolution 10/23 of the Human Rights Council, A/HRC/14/36, 22 March 2010.

[49] Blake J., Developing a New Standard-setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage. Elements for Consideration, UNESCO, Paris, 2001, 88-93:

[50] J. Jokilehto, Definition of cultural heritage: References to documents in history (Originally for ICCROM, 1990), Revised for CIF, 2005, p. 5, http://cif.icomos.org/pdf_docs/Documents%20on%20line/Heritage%20definitions.pdf (մուտք՝ 01.09.2024)

[51] Larsen P. B., Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights: International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, UNESCO, Paris, 2020, pp. 89-90.

[52] Bokova I., Culture on the Front Line of New Wars, "Brown Journal of World Affairs", 2015, N. 1, Vol. 22, p. 294.

[53] UNESCO, "Cultural cleansing" by terrorists is a war crime: UNESCO chief, 24 March 2017, UN General News, https://news.un.org/en/audio/2017/03/625382 (մուտք՝ 01.09.2024):

[54] UN High Commissioner for Refugees (UNHCR), Forced Displacement and International Crimes, 2011, p. 14.

[55] UN High Commissioner for Refugees (UNHCR), Forced Displacement and International Crimes, 2011, p. 11.

ները կարող են դառնալ Հռոմի քրեական դատարանի իրավասության առարկա՝ նաև մշակութային ինքնության տեսանկյունից, քանզի մշակութային իրավունքների պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանության անբաժանելի մասն է:

Բռնի տեղահանված արցախահայերն իրենց իրավունքների հարգման դեպքում պետք է անարգել մուտք ունենային դեպի Արցախի հուշարձանների տարածքներ, իրավունք՝ հաղորդակցվելու իրենց մշակութային և հոգևոր արժեքների հետ, ինչպես նաև հնարավորություն՝ իրականացնելու ծեսեր, աղոթքներ և այլն: Բայց այսօր, կյանքի հանդեպ վախի պայմաններում, նրանք զրկված են այդ իրավունքից:

Կարևոր է արձանագրել, որ, Հռոմի կանոնադրության համաձայն, մշակութային ժառանգության ոչնչացումները կարող են իրավական հետևանքներ ունենալ միայն այն դեպքում, երբ դրանք պատերազմական հանցագործությունների, մարդկության դեմ հանցագործությունների, բռնի տեղահանության, ցեղասպանության կամ ագրեսիայի հանցագործության մաս են կազմում: Ուստի Արցախի մշակութային ժառանգության ոչնչացումն ու արցախահայության մշակութային իրավունքների խախտումը պետք է դիտարկել ավելի լայն իրավական շրջանակի ներքո[56]:

Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ մշակույթի իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև մշակութային ժառանգության ոչնչացումը Հռոմի կանոնադրության շրջանակում ներկայումս չեն կարող քննվել որպես առանձին հանցագործություն, ապա դրանց պաշտպանությունը պետք է դիտարկել բռնի տեղահանության հանցագործության համատեքստում:

Արցախի ամբողջական հայաթափումը 2023 թվականի սեպտեմբերին (ինչպես նաև մինչ այդ՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով Շուշիից և Հադրութից ու այլ շրջաններից բնակչության զանգվածային տեղահանումը) կարող է քննվել ըստ կանոնադրության դրույթների, քանզի դատարանն ունի նախադեպ, որ եթե բռնի տեղահանությունը սկսվել է ոչ անդամ պետությունում (տվյալ դեպքում՝ Ադրբեջանում), բայց ավարտվել Հռոմի ստատուտի անդամ հանդիսացող երկրում (Հայաստանում), ապա Հռոմի դատարանը կարող է իրավասու լինել դա քննելու,- ինչպես արդեն տեղի է ունեցել Մյանմարի նախադեպում :

Եզրակացություն

Միջազգային քրեական դատարանի կանոնադրության (Հռոմի ստատուտի) ուժի մեջ մտնելը Հայաստանի համար նոր հնարավորություններ է բացում դեպի անվտանգային լրացուցիչ կառուցակարգեր՝ այդ թվում բռնի տեղահանված արցախահայերի իրավունքների և Արցախի հայկական մշակութային ժառանգության պաշտպանության տեսանկյունից: Սակայն, Ադրբեջանի կողմից 2024 թվականի ընթացքում (ինչպես նաև դրանից առաջ և հետո) շարունակաբար իրականացվող մշակութային ժառանգության ոչնչացման, յուրացման և պատմական ճշմարտության խեղաթյուրման դեպքերը վկայում են, որ միջազգային իրավական գործիքակազմի՝ Հռոմի կանոնադրության ընդունման փաստն ինքնին դեռևս չի երաշխավորում այդ իրավունքների պաշտպանությունը, և որ Ադրբեջանը չի հարգում միջազգային իրավունքի նորմերը:

Սույն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանությանը միտված լրացուցիչ կառուցակարգերի առումով, խնդիրն անհրաժեշտ է դիտարկել բռնի տեղահանվածների մշակույթի իրավունքի խախտումների համատեքստում՝ որպես բռնի տեղահանության բազմաշերտ հարցերից մեկը, կապելով դա նաև բռնի տեղահանվածների՝ իրենց հուշարձանների տարածքներ այցելության արգելքների, մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումների և խոչընդոտների, իրենց ժառանգության տարածքներ և պատմական գերեզմանոցներ մուտքի անհնարինության հետ: Բացի այդ, արցախահայերի մշակույթի իրավունքի խախտումը պետք է քննել բռնի տեղահանության հանցագործության

[56] ICC, 2021, Policy on Cultural Heritage, § 37.

[57] Նախադեպ է Հռոմի քրեական դատարանի որոշումը Մյանմարի գործով (Prosecutor v. Myanmar/Bangladesh, ICC-01/19): Այս գործը վերաբերում էր Ռոհինջա ժողովրդի տեղահանությանը, և 2018 թվականի սեպտեմբերի 6-ին դատարանը հաստատեց, որ, չնայած Մյանմարը Հռոմի ստատուտի անդամ չէ, Միջազգային քրեական դատարանն իրավասություն ունի քննելու բռնի տեղահանության դեպքը: Հիմնական փաստարկն այն էր, որ Ռոհինջա ժողովրդի դեմ հանցագործությունները սկսվել էին Մյանմարի տարածքում, սակայն բռնի տեղահանության հետևանքով նրանք հատել էին սահմանը և հայտնվել Բանգլադեշում, որը Հռոմի ստատուտի անդամ երկիր է:

համատեքստում, քանի որ արցախահայերի՝ իրենց մշակութային ժառանգությունից բռնի կերպով կտրվելն ուղիղ սպառնալիք է նրանց հավաքական ինքնության պահպանմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Blake J., Developing a New Standard-setting Instrument for Safeguarding Intangible Cultural Heritage. Elements for Consideration, UNESCO, Paris, 2001, 88-93.
2. Bokova I., Culture on the Front Line of New Wars, "Brown Journal of World Affairs", 2015, N. 1, Vol. 22, pp. 289-296.
3. CBC Azerbaijan, Ильхам Алиев заложил фундамент новой мечети в Шуше, https://www.youtube.com/watch?v=sAXPwmmIqmQ, May 13, 2021.
4. Council of Europe, 1950, European Convention on Human Rights, https://www.echr.coe.int/documents/convention_eng.pdf
5. International Criminal Court, 1998, Rome Statute of the International Criminal Court. United Nations, https://www.legal-tools.org/doc/7b9af9/pdf/
6. International Criminal Court, 2021, Policy on Cultural Heritage, https://www.icc-cpi.int/sites/default/files/itemsDocuments/20210614-otp-policy-cultural-heritage-eng.pdf
7. J. Jokilehto, Definition of cultural heritage: References to documents in history (Originally for ICCROM, 1990), Revised for CIF, 2005, p. 5, http://cif.icomos.org/pdf_docs/Documents%20on%20line/Heritage%20definitions.pdf
8. Larsen P. B., Modern Conflict, Emergencies and Cultural Heritage: Exploring the Relevance of Cultural Rights: International Conference on the 20th Anniversary of the 1999 Second Protocol of the 1954 Hague Convention Protecting Cultural Property Conference Proceedings, UNESCO, Paris, 2020, pp. 89-90.
9. News.am, Օկուպացված Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցու ոչնչացումը ցեղասպանական գործողություն է. ահազանգ, https://news.am/arm/news/823298.html
10. Organization of American States, American Convention on Human Rights, 1969. https://www.oas.org/dil/treaties_b-32_american_convention_on_human_rights.pdf
11. UN Diplomatic Conference of Plenipotentiaries on the Establishment of an International Criminal Court, Rome, 1998: Official Records, Vol. I, (United Nations, New York, 2002), https://legal.un.org/icc/rome/proceedings/E/Rome%20Proceedings_v1_e.pdf
12. UN General Assembly, Report of the Special Rapporteur in the Field of Cultural Rights, Geneva, 2016, A/HRC/31/59, https://www.ohchr.org/EN/HRBodies/HRC/RegularSessions/Session31/Documents/A.HRC.31.59_E.docx
13. UN High Commissioner for Refugees (UNHCR), Forced Displacement and International Crimes, 2011.
14. UNESCO, Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land. The Hague, 18 October 1907, https://www.legal-tools.org/doc/fa0161/pdf/
15. UNESCO, "Cultural cleansing" by terrorists is a war crime: UNESCO chief, 24 March 2017, UN General News, https://news.un.org/en/audio/2017/03/625382
16. UNESCO, Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1954, arts. 1, 4, https://www.legal-tools.org/doc/6d6697/pdf/
17. UNESCO, Protocol additional to The Geneva Conventions of 12 August 1949, and relating to The Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), https://www.legal-tools.org/doc/d9328a/pdf/
18. UNESCO, Protocol additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to The Protection of Victims of Non-International Armed Conflicts (Protocol I), https://www.legal-tools.org/doc/fd14c4/pdf/
19. UNESCO, Second Protocol to the Convention or the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict, 1999, https://www.legal-tools.org/doc/7d8622/pdf/
20. United Nations, 1989, Convention on the Rights of the Child, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/convention-rights-child
21. United Nations, 1948, Universal Declaration of Human Rights, https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights

22. United Nations, 1966, International Covenant on Civil and Political Rights, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights
23. United Nations, 1966, International Covenant on Economic, Social and Cultural Rights, https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-economic-social-and-cultural-rights
24. United Nations, 2010, Report of the Independent Expert in the Field of Cultural Rights, Ms. Farida Shaheed, submitted pursuant to resolution 10/23 of the Human Rights Council, UN Doc. A/HRC/14/36, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G10/124/38/PDF/G1012438.pdf?OpenElement
25. United Nations, 2016, Report by the Special Rapporteur in the field of cultural rights, UN Doc. A/71/317, https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/N16/245/27/PDF/N1624527.pdf?OpenElement
26. United Nations, About us, https://www.un.org/en/about-us
27. Сотрудник Шушинского государственного заповедника Муслим Имранлы, Telegram, 2024, September 21, https://t.me/bez_tor/53964?single&fbclid=IwY2xjawFbylNleHRuA2FlbQIxMAABHS5HBXTvESAr_Tvb1JDrtknxjGmekuRRMrM2RDYBySleYIBW2N-Bwlt2yAA_aem_GxfnM4y_QtPUnXkLAFZuxQ
28. Ազատություն ռադիոկայան, Ազգային ժողովն ընդունեց Հռոմի ստատուտի վավերացման մասին օրենքի նախագիծը, https://www.azatutyun.am/a/32620778.html
29. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը հիմնահատակ ավերել է Քարինտակ գյուղը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հիմնահատակ-ավերել-է-քարինտ/
30. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը ոչնչացրել է Տանձատափի եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-տանձատափի-եկեղ/
31. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը ոչնչացրել է Շուշի քաղաքի Ղազանչեցոց (Հին) գերեզմանոցը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-շուշի-քաղաքի-ղա/
32. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում, Ադրբեջանը ոչնչացրել է Մոխրենեսի Սբ. Սարգիս եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-ոչնչացրել-է-մոխրենեսի-սբ-սա/
33. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը պղծել է Ստեփանակերտի հուշահամալիրի շիրմաքարերը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-պղծել-է-ստեփանակերտի-հուշա/
34. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանի «աղվանա-ուդիական» համայնքի ներկայացուցիչները պղծել և քանդել են Արցախի Քաշաթաղի շրջանի Ծիծեռնավանքի հայկական եկեղեցու եզակի շուրջը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանի-աղվանա-ուդիական-համայնք/
35. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանցիները հիմնահատակ ավերել են Արցախի Հադրութի շրջանի Մարիամաձոր գյուղը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանցիները-հիմնահատակ-ավերել-են/
36. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին մզկիթի վերածելու ադրբեջանական նախագծի մասին, https://monumentwatch.org/hy/alerts/բերձորի-սուրբ-համբարձում-եկեղեցին-մզ/
37. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Հերթական կեղծիքները Դադիվանքի և Գանձասարի վերաբերյալ, https://monumentwatch.org/hy/alerts/պատմության-կեղծարարությունը-դադիվան/
38. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Հերթը հասավ Ծարին, https://monumentwatch.org/hy/alerts/հերթը-հասավ-ծարին/
39. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Նոր մզկիթների հիմնարկեք՝ Արցախի օկուպացված հայկական բնակավայրերում, https://monumentwatch.org/hy/alerts/նոր-մզկիթների-հիմնարկեք՝-արցախի-օկու/
40. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին ավերվում է ադրբեջանցիների կողմից, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիի-կանաչ-ժամ-եկեղեցին-ավերվում-է-ա/
41. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին՝ այլափոխված և պղծված, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիի-սուրբ-ամենափրկիչ-եկեղեցին՝-այ/
42. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիում ադրբեջանական թանգարան, մզկիթ և հրապարակ՝ Հայոց ցեղասպանության ավերված հուշարձանի տարածքում, https://monumentwatch.org/hy/alerts/շուշիում-ադրբեջանական-թանգարան-մզկի/
43. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Շուշիում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի ավերումը,

https://monumentwatch.org/hy/alerts/շուշիում-հայոց-ցեղասպանության-զոհեր/
44. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում: Ադրբեջանը հողին է հավասարեցրել Շուշիի Սբ Հովհաննես Մկրտիչ (Կանաչ ժամ) եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հողին-է-հավասարեցրել-շուշի/
45. ՀՀ ԱԳՆ Մամուլի խոսնակ: Միջազգային քրեական դատարանում տեղի կունենա Հայաստանի անդամակցությանը նվիրված պաշտոնական միջոցառումը, https://www.facebook.com/ArmSpoxMFA/posts/pfbid0pVh1tb9KPs4WAh1JTKQguUE26PCRX-vsnBM5xdvsTRv6DVyux12ZjEsGLy3qCHr13l
46. ՀՀ Ազգային ժողով, Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությանը մասնակից պետությունների վերաբերյալ ցանկ, http://www.parliament.am/draft_docs8/K-658_AGN_Cank.pdf
47. Տիգրանյան Ա., 2023, Արցախի մշակութային ժառանգությունը, պաշտպանության մեխանիզմները ժառանգության պաշտպանության միջազգային համակարգում, «Վեմ» մատենաշար, թիվ 6:

Армине Тигранян
Младший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат исторических наук

МЕЖДУНАРОДНОЕ ПРАВО

ПЕРСПЕКТИВЫ И ВОЗМОЖНОСТИ ЗАЩИТЫ ПРАВ НАСИЛЬСТВЕННО ПЕРЕСЕЛЕННЫХ АРЦАХСКИХ АРМЯН И КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ АРЦАХА СПУСТЯ ГОД ПОСЛЕ РАТИФИКАЦИИ РИМСКОГО СТАТУТА

1 февраля 2025 года исполнился год со дня вступления в силу устава Международного уголовного суда (Римского статута) для Республики Армения. Принятие устава, помимо механизмов применения санкций против тяжких преступлений против человечности, также имеет очень важное значение в сфере международного права, открывая новые возможности как для защиты культурного наследия Арцаха, так и для реализации и уважения прав (включая культурные права) насильственно переселенных арцахских армян. Однако, как утверждается в этой статье, продолжающиеся уничтожение Азербайджаном культурного наследия Арцаха в течение 2024 года (а также до и после), процессы присвоения и осквернения, искажения исторической истины, а также продолжающиеся нарушения права армян Арцаха на общение с культурным наследием свидетельствуют о том, что Азербайджан не уважал и не уважает нормы международного права.

В этой статье в рамках устава Международного уголовного суда представлены запреты на уничтожение культурного наследия, многовекторные проблемы, связанные с насильственным переселением, в том числе нарушение культурных прав. Анализируется важность сохранения культурного наследия как ключевого условия реализации культурных прав армян Арцаха, а также представлены перспективы, которые, согласно положениям Римского статута, могут способствовать дальнейшей защите армянского культурного наследия Арцаха.

Ключевые слова: *Международный уголовный суд (Римский статут), Республика Армения, культурное наследие Арцаха, культурные права арцахских армян, насильственное переселение, Азербайджан*

Armine TIGRANYAN
Junior Researcher at "Amberd" Research Center, ASUE, PhD of Historical Sciences

INTERNATIONAL LAW

THE PROSPECTS AND OPPORTUNITIES FOR THE PROTECTION OF THE CULTURAL HERITAGE OF ARTSAKH AND THE RIGHTS OF FORCIBLY DISPLACED ARMENIANS ONE YEAR AFTER THE RATIFICATION OF THE ROME STATUTE

On February 1, 2025, one year had passed since the Rome Statute of the International Criminal Court entered into force for the Republic of Armenia. Beyond serving as a mechanism for prosecuting grave crimes against humanity, the adoption of the Statute also holds significant implications in the field of international law, opening new avenues for the protection of Artsakh's cultural heritage, as well as

for the realization and respect of the rights of forcibly displaced Armenians from Artsakh, including their cultural rights.

However, as substantiated in this article, Azerbaijan's ongoing destruction, appropriation, and desecration of Artsakh's cultural heritage throughout 2024 (as well as before and after this period), alongside the systematic falsification of historical facts and the continuous violations of the right of Artsakh Armenians to access their cultural heritage, demonstrate that Azerbaijan has neither respected nor continues to respect the norms of international law.

Within the framework of the Rome Statute of the International Criminal Court, this article presents the prohibitions on the destruction of cultural heritage, as well as the multifaceted issues related to forced displacement, including violations of cultural rights. It analyzes the significance of cultural heritage protection as a fundamental condition for the realization of the cultural rights of Artsakh Armenians. Additionally, it outlines the prospects offered by the provisions of the Rome Statute that could contribute to the future protection of Artsakh's Armenian cultural heritage.

Keywords: *Artsakh, international organizations, destruction of cultural heritage,*